ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
Քարաձորի համայնքապետարան

N 214 15..12. 2020թ.

ՀՀ Լոռու մարզպետ պարոն
Ա. Ղուկասյանին

Ի պատասխան Ձեր 17.01..2020թ թիվ 01/107,3/00404-20 գրության կից ներկայացնում եմ Քարաձոր համայնքի ավագանու 22.12. 2020 թվականի հրավիրված հերթական նիստի մասին տեղեկացումը, նիստի օրակարգը, նիստում քննարկվելիք հարցերի վերաբերյալ ընդունվելիք որոշումների նախագծերը և հավելվածները
Առդիր՝ 17 թերթ :

Համայնքի ղեկավար՝ Հ. Ռոստոմյան

ՏԵՂԵԿԱՑՈՒՄ

Քարաձոր համայնքի ավագանու հերթական նիստի վերաբերյալ

Համայնքը	Միջոցառման անվանումը	Օրը	Ժամը	Անցկացման վայրը
Քարաձոր	Ավագանու հերթական նիստ	22.12.2020թ	12:00	Քարաձորի համայնքապետարան

Նախագիծ

ՕՐԱԿԱՐԳ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՔԱՐԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ

22. 12.2020թ. գ.Քարաձոր

1. ՔԱՐԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22 -ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՔԱՐԱՁՈՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

3. ՔԱՐԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ, ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ՂԲԱՂԵՑՆՈՂ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՔԱՐԱՁՈՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

5. ՔԱՐԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

6.ՔԱՐԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՆԹԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ -5Ա

ՔԱՐԱՃՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. Հ. Ռոստոմյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով.

Քարաձոր համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Քարաձոր համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 22-ի հերթական նիստի օրակարգը.

ՕՐԱԿԱՐԳ

1.Քարաձոր համայնքի ավագանու 2020 թվականի հոկտեմբերի դեկտեմբերի 22-ի հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին
2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Քարաձոր գյուղական համայնքում 2021 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակները, դրույքաչափերը հաստատելու մասին
3. Քարաձորի համայնքապետարանի քաղաքական, հայեցողական, աշխատակազմի Համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնողև տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին
4. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Քարաձոր գյուղական համայնքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին
5. Քարաձոր համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին
6. Քարաձոր համայնքի վրչական սահմաններում գտնվող հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին

Համայնքի ղեկավար Հրանուշ Ռոստոմյան

Որոշման նախագիծը նախապատրաստեց
Հրանուշ Ռոստոմյան

ՆԱԽԱԳԻԾ -5Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՔԱՐԱՁՈՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. Հ. Ռոստոմյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ և 19-րդ կետերով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ հոդվածներով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ և 37-րդ հոդվածներով՝

Քարաձոր համայնքի ավագանին որոշում է.

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Քարաձոր գյուղական համայնքում 2020 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակները, դրույքաչափերը համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումը օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար:
3. Ուժը կորցրած ճանաչել Քարաձոր համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Քարաձոր գյուղական համայնքում 2020 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» N 18 –Ն որոշումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը :

Համայնքի ղեկավար Հրանուշ Ռոստոմյան

Որոշման նախագիծը նախապատրաստեց
Հրանուշ Ռոստոմյան

ՆԱԽԱԳԻԾ -5Ա

ՔԱՐԱԶՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ, ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. Հ. Ռոստոմյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 28-րդ մասով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ և 37-րդ հոդվածներով

Քարաձոր համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Քարաձորի համայնքապետարանի քաղաքական, հայեցողական, աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ավագանու 2019թ դեկտեմբերի 24-ի N 19-Ն որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 1-ից:

Համայնքի ղեկավար Հրանուշ Ռոստոմյան

Որոշման նախագիծը նախապատրաստեց
Հրանուշ Ռոստոմյան

ՆԱԽԱԳԻԾ -5Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՔԱՐԱՁՈՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. Հ. Ռոստոմյան/

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 32-րդ հոդվածով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ 5-րդ մասով

Քարաձոր համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել 2021 թվականի բյուջեն

ա) եկամուտների գծով --13606.4հազ. դրամ
բ) ծախսերի գծով - 13606.4 հազ. դրամ

2. Հաստատել համայնքի բյուջեի եկամուտները, ըստ առանձին եկամտատեսակների՝ հատված 1:
3. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը, ըստ գործառնական դասակարգման՝ հատված 2:
4. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը, ըստ տնտեսագիտական դասակարգման՝ հատված 3:
5. Հաստատել համայնքի բյուջեի հավելուրդը կամ դեֆիցիտը (պակասուրդը)՝ հատված 4:
6. Հաստատել համայնքի բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրները կամ հավելուրդի օգտագործման ուղղությունները՝ հատված 5:

Համայնքի ղեկավար Հրանուշ Ռոստոմյան

Որոշման նախագիծը նախապատրաստեց
Հրանուշ Ռոստոմյան

ՆԱԽԱԳԻԾ -5Ա

ՔԱՐԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ Ձեկ. Հրանուշ Ռոստոմյան

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7–րդ կետին, համայնքի ավագանու 2017 թվականի հունիսի 9-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Քարաձոր համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ09-Ա որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալական անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունները.

Քարաձոր համայնքի ավագանին որոշում է.

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի:
2. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում հատկացված գումարները տրամադրել բնակիչներին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար Հ.Ռոստոմյան

Որոշման նախագիծը նախապատրաստեց
Հրանուշ Ռոստոմյան

ՆԱԽԱԳԻԾ -5Ա

ՔԱՐԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ Զեկ՝ Հրանուշ Ռոստոմյան

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 42-րդ կետով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առնքեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 01.07.2010թվականի թիվ 186-Ն հրամանով հաստատված հրահանգի 9-րդ կետի 5-րդ ենթակետով, հաշվի առնելով ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի Տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի կողմից 25.06.2020թ -ին տրված տեղեկատվությունը և համայնքի ղեկավարի ներկայացրած առաջարկությունը, որ կադաստրային քարտեզի և տեղեկագրի համաձայն 06-109-0009-0001 ծածկագրով 0.06 հա հողամասը սխալմամբ համայնքային սեփականության փոխարեն հաշվառվել է անհայտ և որևէ անձի նկատմամբ գույքային իրավունքի գրանցում չի իրականացված

Համայնքի ավագանին որոշում է .

1. Ճանաչել Քարաձոր համայնքի սեփականության իրավունքը 06-109-001-0009 ծածկագրով 0.06 հա բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասի նկատմամբ համաձայն հատակագծի:
2.Համայնքի ղեկավար Հ. Ռոստոմյանին՝ դիմել ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեին, 06-109-0009-0001ծածկագրով 0.06 հա բնակավարերի բնակելի կառուցապատման հողամասի նկատմանբ Քարաձոր համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու և համայնքային սեփականության իրավունքի վկայական տրամադրելու համար:

Համայնքի ղեկավար Հ.Ռոստոմյան

Որոշման նախագիծը նախապատրաստեց
Հրանուշ Ռոստոմյան

Հավելված

ՀՀ Լոռու մարզի Քարաձոր համայնքի ավագանու

2020 թվականի դեկտեմբերի 18 -ի N 29 որոշման

ՑՈՒՑԱԿ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՔԱՐԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1.Կարապետյան Նորաբերդ Ռուդիկի 15.0 տասնհինգ հազար դրամ /երեխ. ծննդ./

2.Կարապետյան Հայկարամ Հայրապետի 15.0 տասնհինգ հազար դրամ/ երեխ.ծննդ./

3. Սարիբեկյան Կարո Գլախի 20.0 քսան հազար դրամ./ հարազ. մահվ/

4. Սարգսյան Արամայիս Հովհաննեսի 20.0 քսան հազար դրամ / հարազ. մահվ./

Քարաձոր համայնքի ղեկավար՝ Հ. Ռոստոմյան

Հավելված
Քարաձոր գյուղական համայնքի ավագանու
2020 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ 27 -Ն որոշման

ՔԱՐԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ և ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. աշխատակիցների թվաքանակը՝ 4
2. աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը (ՀՀ դրամ)
Համայնքի ղեկավար	1	200000
Աշխատակազմի քարտուղար	1	160000
Աշխատակազմի առաջատար մասնագետ	1	120000
Տեխսպասարկման անձնակազմ		
Հավաքարար	0.5	90000
Տեխնիկական աշխատող	0.5	93000

Համայնքի ղեկավար՝ Հ. Ռոստոմյան

Հավելված
Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Քարաձոր համայնքի ավագանու
2020 թ. Դեկտեմբերի 22-ի, թիվ 26-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՔԱՐԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝

1) հիմնական օբյեկտների համար՝

ա. մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող և հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ յոթ հազար հինգ հարյուր դրամ.

բ. սույն հավելվածի 1-ին կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությամբ չնախատեսված օբյեկտների համար՝

200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝

տասնհինգ հազար դրամ.

500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝

քսանհինգ հազար դրամ.

1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝

քսանհինգ հազար դրամ.

3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝

հիսուն հազար դրամ.

2) ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

ա. մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝

մեկ հազար հինգ հարյուր դրամ.

բ. 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝

երկու հազար հինգ հարյուր դրամ.

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների(բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով, տեղական տուրքը սահմանել՝

ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր

մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն մեկ հազար հինգ հարյուր դրամ.

բ) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի <<ա>> ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

գ) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

դ) Համայնքի վարչական տարածքում քարե ցանկապատի կառուցման թույլտվության համար տեղական տուրք սահմանել՝ երեք հազար դրամ:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝ երեք հազար դրամ.

4. Համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի՝ թույլտվության համար օրացույցային տարվա համար՝ մեկ հարյուր հիսուն հազար դրամ

5. Համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում ու կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ անտրի կետերում կամ ավտոմեքենաների սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտերում տեխնիկականհեղուկների վաճառքի՝ թույլտվության համար օրացույցային տարվա համար քառասուն հազար դրամ

6. Համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու համար թույլտվության համար օրացույցային տարվա համար՝ քսանհինգ հազար դրամ

7. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երեք հազար դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում տասնմեկ հազար դրամ,

գ. 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասնհինգ հազար դրամ,

դ. 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսաներկու հազար դրամ,

ե. 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երեսուներեք հազար դրամ,

զ. 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ վաթսուն հազար դրամ:

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երեք հազար դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասնմեկ հազար դրամ,

գ. 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասնհինգ հազար դրամ,

դ. 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսաներկու հազար դրամ,

ե. 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երեսուներեք հազար դրամ,

զ. 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ վաթսուն հազար դրամ:

8. Համայնքի վարչական տարածքում իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին <<Առևտրի և ծառայությունների մասին>> ՀՀ օրենքով սահմանված

ա) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել յուրաքանչյուր օրվա համար՝ երեք հարյուր հիսուն դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

9. Համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24-ից հետո աշխատելու թույլտվության համար օրացույցային տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ տասնհինգ հազար դրամ

բ. Հանրային սննդի, զվարճանքի օբյեկտների համար՝ երեսուն հազար դրամ

գ.բաղնիքների (սաունաների) համար՝ հիսուն հազար դրամ

դ. խաղատների համար՝ վեց հարյուր հազար դրամ

ե.շահումով խաղերի համար՝ երկու հարյուր հիսուն հազար դրամ

զ. վիճակախաղերի համար՝ հարյուր հիսուն հազար դրամ

10. Համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար

ա. հիմնական շինությունների ներսում

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ,

-26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ վեց հազար դրամ,

-50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնմեկ հազար դրամ,

-50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնմեկ հազար դրամ,

-100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնվեց հազար դրամ,

-200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ քսաներկու հազար դրամ,

-500 և ավել քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երեսունհինգ հազար դրամ,

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երեք հարյուր դրամ,

-26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ,

-50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երեք հազար դրամ,

-100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ վեց հազար դրամ,

-200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնմեկ հազար դրամ,

-500 և ավել քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ քսաներկու հազար դրամ,

11. Ավագանու սահմանված կարգին ու պայմաններին համապատասխան համայնքի վարչական տարածքում արտաքին զովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող զովազդների թույլտվությունների յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանել՝

ա) ալկոհոլային ապիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք զովազդող արտաքին զովազդի համար՝ երկու հազար դրամ.

բ) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երեք հազար հինգ հարյուր դրամ

գ)այլ արտաքին գովազդի համար՝ հազար հինգ հարյուր դրամ

դ) դատարկ գովազդային վահանակների համար համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով

12).Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու համար տեղական տուրքը սահմանել տասը հազար դրամ

ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ

1) համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման տեղական վճարը սահմանել՝ երեք հազար դրամ:

2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման տեղական վճարը սահմանել՝ երեք հազար դրամ:

3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման տեղական վճարը սահմանել երկու հազար դրամ:

4) համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման տեղական վճարը սահմանել՝ երեք հազար դրամ:

5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման տեղական վճարը սահմանել՝ երկու հազար դրամ:

6) համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար աղբահանության տեղական վճար սահմանել՝

1) կենցաղային աղբի համար՝

ա. ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր չափահաս բնակչի համար՝ տեղական վճար սահմանել ամսական մեկ հարյուր դրամ

բ. ըստ բնակելի շինության կամ բնակարանի ընդհանուր մակերեսի՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ հիսուն դրամ:

7) համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական կամ խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման ,ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին շինարարական խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար աղբահանության վճարը սահմանել ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ երեք հազար դրամ:

8) համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար՝ հինգ հարյուր դրամ փոխհատուցման վճար:

9) համայնքը ապասարկող անասնաբույժի ծառայությունների դիմաց տեղական վճարը սահմանել

ա. կենդանիների հիվանդությունների բուժման, կանխարգելման հարցերոն խորհրդատվություն՝ հինգ հարյուր դրամ

բ.ծննդօգնություն

բ. 1թեթև միջամտության համար մեկ հազար դրամ

բ.2 ծանր միջամտության համար հինգ հազար դրամ

գ. վարակիչ հիվանդությունների նկատմամբ՝ կենդանիների իմունականխարգելիչ պատվաստումներ և արյունառում կամ այլ նմուշառում՝ կախված կենդանու տեսակից (բացառությամբ <<Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում>> պետական ծրագրում ընդգրկված հակաանասնահամաճարակային միջոցառումների)

գ. 1մանր կենդանու համար՝ մեկ հարյուր դրամ

գ. 2 խոշոր կենդանու համար երկու հարյուր դրամ

դ. Կենդանիների արտաքին և ներքին մակաբույծների դեմ պայքար՝ երկու հարյուր դրամ

ե. ախտահանություն մեկ քառակուսի մետրի համար՝ երկու հարուր դրամ

զ. միջատազերծում (դեզինսեկցիա)՝ մեկ քառակուսի մետրի համար՝ մեկ հարուր դրամ

է. կրծողների ոչնչացում (դեռատիզացիա) մեկ քառակուսի մետրի համար՝ երկու հարուր դրամ

ը. արհեստական սերմնավորում հինգ հարյուր դրամ

թ. կենդանու հերձում՝

թ.1 մանր կենդանու համար մեկ հազար դրամ

թ.2 խոշոր կենդանու համար երեք հազար դրամ

ժ. Կենդանու բուժում կախված հիվանդության տեսակից և կենդանու տեսակից յուրաքանչյուր այցելությունը՝ մեկ հազար դրամ
ի. Կենդանիների նախասպանդային զննում կախված կենդանու տեսակից՝
ի1. մանր կենդանու համար՝ մեկ հազար դրամ
ի2. խոշոր կենդանու համար՝ երկու հազար դրամ
լ. Կենդանիների հետսպանդային զննում
լ1. մանր կենդանու համար՝ մեկ հազար դրամ
լ2. խոշոր կենդանու համար՝ երկու հազար դրամ

Քարաձոր համայնքի ղեկավար՝ Հրանուշ Ռոստոմյան
22 դեկտեմբերի 2020թ. գ. Քարաձոր